սակաւոր հանդիսականներ սեղան նստան։ Սեղանին վրայ բարեմաղթութիւններ եղան Ռուսիոյ և Անգլիոյ տէրութեանց և նոցա ներկայացուցիչ պ. Կամսարականի և Կլէյտոնի կենաց, վեհափառ սուլթանի, Ներսէս պատրիարքի, Խրիմեան հայրիկի, հայոց «Միացեալ ընկ.» և նորա վասպուրականի տեսչի, «Հայրենասէր ընկ.» ժողովոյ անդամոց և այլն կենաց համար։

Ճաշէն յետոյ հանդիսավայրի բեմէն ատենախօսութիւններ եղան։ Խօսեցան պ. պ. Նշան Շիրվանեան (Թուրքերէն լեզուով), Մարկոս Նաթանեան և Մկրտիչ Թէրլէմէզեան, որոց խօսածներն գրաւոր լինելով, կառավարական պաշտօնեայները առին տարին ի քննութիւն։ Պ. Տաճատ Պէյլէրեան Կամսարական բէկի գրած մի ճառը կարդաց, զոր կառավարութեան պաշտօնեայները քաջութիւն չունեցան պահանջելու։ Իսկ պ. Տաճատի իւր կողմէն բերանացի խօսածները անմիջապէս գրի առնել տուին, յատկապէս կարդացած մի գրագրի ձեռքով։ Պ. Փարթուզալեան պարտաւորուեցաւ Թուրքերէն լեզուով խօսել, որ պաշտօնեայներն ալ հասկանան իւր ասածը և գրելու հարկ չը մնայ։ Հանդէսը վերջացաւ Երեմիա եպիսկոպոսի օրհնութեամբ և խառն բազմութիւնը դրօշակներով, նուագածուներով և փողոցները ազգային երգերով թնդացունելով գնացին մինչ Խրիմեան հայրիկի տանը առջև, ուր հայրիկի վրայ յատուկ երգ մը երգելով, «կեցցէ Վանի սահմանադրական առաջնորդ Խրիմեան Հայրիկ» պօռացին ծափահարելով։ Այն տեղէն ալ ռուսական և անգլիական հիւպատոսարանները գնացին, ուր երգեր երգելով, կեցցէներ պօռացին այդ տէրութեանց ներկայացուցիչներուն համար։ Հայրենասէր ընկերութիւնը, հայոց Միացեալ ընկ. վարժապետանոցի աշակերտները և Ազգանուէր ընկերութիւնը իրենց խումբերուն համար մանաւոր դրօշակներ ունէին իրենց անուններով։ Սոցանէ զատ երեք դրօշակ ալ կերթար ժողովուրդին առջևէն, որոց վրայ գրուած էին «կեցցէ Սուլթան Համիդ-խան», «կեցցէ ազգային սահմանադրութիւն» և «կեցցէ բարեկարգութիւն»։

Երկու շաբաթի չափ կայ որ երկրաշարժի ցնցումներ կը պատահին քաղաքիս մէջ, բայց վտանգաւոր չեն։ Միայն թէ ծովին արևմտեան հիւսիսակողմը Խլաթ գաւառին մէջ վտանգաւոր ցնցումներ եղած են և գիւղ մը ամբողջովին հիմնայատակ եղած է, կասեն։ Անգլիական դերհիւպատոս պ. Կլէյտոն հինգ օր է որ գնացած է Խլաթ, երկրաշարժէ արկածեալներուն օգնութիւն անելու համար։ Այսօր լուր տարածուած է թէ Վանի հարաւ. արևմտեան կողմն ալ մի քանի գիւղեր վնասուած են այս գիշեր կրկնուած երկրաշարժէն։

Մի քանի օր է որ երեք գիտնական ֆրանսացիներ եկած են հոս. պ. Շանտրը, Լիոնի միւզէումի երկրորդ տեսուչը. պ. Դօնա Մօտ, Լիոնի բնապատմութեան միւզէումը բնագիտական գործերով զբաղող և պ. Բարրի, մի գինեւորական։ Սոքա տեղական կենդանիներ և հնութիւններ ժողվելով կը զբաղին։ Ուզեցին բերդն ալ պտտել և տեսնել, բայց կառավարութիւնը չը թոյլատրեց։ Միացեալ ընկ. վարժապետանոցն այցելեցին և շատ գոհ եղան տեսնելով որ այնտեղ բնական պատմութիւն ալ դաս կը տրուի։ Հետևեալ օր աշակերտներն իրենց տեսչին և բնական գիտութեանց ուսուցչին հետ հրաւիրեցին իրենց վրանները (քաղաքին դրան մօտ վրաններ զարկած կը բնակէին) և կենդանաբանական հաւաքածոյներ (collection) ցոյց տալով, մի թռչունի ալ փորը պարպեցին և ցոյց տուին թէ ինչպէս զեղելու է որ լաւ պահուի։ Խոստացան աշակերտաց, բնապատմութեան վերաբերեալ գիրքերէն գիրքեր և պիտոյքներ յղել Լիոնէն։ Այսօր այդ պարոնները մեկնեցան Վանէն դէպի ձեր կողմը գալու համար, գիտական հետազօտութիւններու պաշտօնով։ Ուրիշ անգամ ալ եղած են Տփղիս։

Զորրորդ զօրաբանակի հրամանատար Հաֆիս-փաշան և նորա օգնական Մուսա-փաշան, որք գնացած էին Իրադուլլահը համոզել Կ. Պոլիս ղրկելու համար, երեք օր առաջ վերադարձան Վան, Հէյիսը իրենց հետ բերելով։ Բոլոր թիւրք պաշտօնատարները, ընդ որս և Գարեգին վարդապետ, գնացին դիմաւորել։ Թիւրքաց մոլեռանդ ամբոխ իրար կոխոտելով յառաջ կանցնէին Հէյիսի շորերուն քղանցքը, կամ նորա ոտքը և կամ նստած ձիուն թամբը համբուրել արժանանալու համար։ Եւ մեր վրայ տիրապետելով զմեզ կառավարել ուզող ազգը այդ խաժամուժ ամբոխն է...։

ՀՐԱՆՏ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 8 յունիսի 1881

Մի ամիս յառաջ քննելով Կ. Պոլսի հայ մամլոյն ընդհանրապէս կացութիւնն, ասել էի թէ սա ոչ միայն մի զգալի արդիւնք չէ արտաբերած մինչև ցայժմ ազգին բարօրութեանն նկատմամբ, այլ և օրագիրներէն սմանք ստրկանալով մինչև այնպիսի ձեռնարկներու, որք մասնաւոր կենաց մէջ իսկ դատապարտելի են, ևս առաւել հրապարակաւ գործուած ժամանակ, ազգին բարոյականութեանն իսկ մեծ վնաս հասուցած են։ Իրաց այս վիճակին մէջ, լրագրութեան ասպարէզն լինելով ոչ—պատուաւորագոյնն ուրիշ ասպարէզներ մէջ, և լրագրապետք— չը մոռանամք հաղուագիւտ բացառութիւններն—հեռացնելով իւրեանց վերայէն այն պատկառանքն, զոր կը վայելեն ուրիշ տեղ խմբագիրք, շատ մասնագէտ և պատուաւոր անձինք կը դժկամակին մեր մէջ թէ մի նոր լրագիր հիմնելու և թէ բացարձակապէս աշխատակցելու արդէն հիմնուած մի թերթի, և այսպէսով ազգն զրկուած կը մնայ նոցա օգտակար խորհուրդներէն և հմտալից գրուածքներէն։

Եթէ մի անհատ ուզէ այսօր հասարակութեան հետ յարաբերութեան մտնել օրագրի միջոցով, առանց մի կեղծ անուան ներքև ծածկելու իւր անձն, պէտք է որ ամեն ժամ, ամեն վայրկեան, իւր արժանապատուութիւնն վտանգի ենթարկէ։ Չեմք ճանաչեր մի այնպիսի անձ որ այս պայմանին դիմանի, որքան որ ոյժգին լինի իւր ազգասիրական եռանդն և իւր գրականական յայտնութիւնն։

Ի՞նչ է սորա պատճառներն։

Այստեղի լրագիրներէն շատերուն, ինչպէս ասացինք արդէն, ամեն մէջոց ընդունելի են մի քանի օրինակ աւելի վաճառելու համար։ Սուտ լուրեր, գայթակղական գրուածքներ, անձնական կռիւներ, հայհոյանք և լկտի մանրավէպեր, լան են, եթէ ընթերցողաց ճաշակն կը հրապուրեն։ Ի՞նչպէս ուրեմն կարող է մի արժանաւոր անհատ գնալ կամաւորապէս այդ խայտառակութիւններն գրելի առնող մարդոց հետ դրացութիւն անել մի թերթի մէջ։ Ենթադրենք սակայն որ յիշեալ հեղինակն գտաւ իւր փափաքած պատուաւոր թերթն և այնտեղ սկսաւ արտայայտել իւր կարծիքներն այլ և այլ խնդրոց նկատմամբ։ Ինչ ընդունելութիւն պահուած է իրեն։ Ցանկարծ կը տեսնէք որ մի, երկու, երեք թերթեր, որք առիթի կը սպասեն այն լրագրի վերայ յարձակելու, կեղծեն այն հեղինակի հատուածին վերայ, չէ թէ նորա սկզբունքներն չընդունելուն համար —ինքեանք կարծիք անգամ չունին—այլ լոկ այն պատճառաւ որ այս անուն թերթին մէջ գրուած է այն, և նորա պատասխանելու պատրուակաւ կը շեղին քոլորովին խնդիրէն, կը խեղաթիւրեն նորա ասածներն, անհաւատարիմ կերպով մէջ կը բերեն նորա խօսքերն և մի այնպիսի ձեւով կը ներկայացնեն հարցն խեղճ հասարակութեան, որ անմիջապէս սորա այն անձին վերայ ունեցած համակրութիւն կը փոփոխի մտքին մէջ։ Բայց այս հետևութիւնն ոչինչ կարէ համարուիլ. եթէ գիտուն և պատուաւոր հեղինակին ճակատագիրն այս միայն լինէր։

Վիճաբանութեան համար աւելի դիւրին և աւելի սովորական մի ճանապարհ ունին այստեղ խմբագիր պարոններէն սմանք, այն է մի հարց, կամ այն հարցի առթիւ արտասանուած մի բառ զաւելով, յարձակիլ անզուսպ բերանով հեղինակի անձնաւորութեան վերայ։ Եւ մի կարծէք թէ այս մասն թեթև կերպով կանցնի այս տեղ։ Այս ճիւղին մէջն է մանաւանդ որ այդ պարոններն կը գերազանցեն։ Անուն, մականուն հեղինակին, ընտանիք, ընկերական վիճակ, անցեալ և ապագայ, ոչ մին կը խնայեն։ Մասնիչ ակնարկութիւնք, զրպարտութիւնք, հայհոյանք, մէկ բառով ինչ որ կայ պատունակեալ ամեն լեզուի գինեասուններու բառարանին մէջ կը տեղացնեն անզէն և ամօթխած մարդուն վերայ, որմէ հետև այս վերջինն հարկադրուած է փոխադարձաբար ընտրել հետևեալ միջոցներն։

Կամ լռութիւն պահել, կամ նոյն գռեհիկ լեզուով պատասխանել, կամ դատարաններու դիմել և կամ իւր դատաստանն ինքն տեսնել, ազատութիւնն և կեանքն իսկ վտանգի դնելով։

Ո՞րն է այս տարբեր միջոցներուն մէջ ընտրելագոյնն, և ինչ պէտք է անել թշնամանալ գրագէտն այսպիսի մի պարագայի մէջ։

Այս երկրին մէջ հայհոյանքի և զրպարտութեան դէմ լռելն, տկարութեան, յանցանաւորութեան նշան համարուած է և քաջն ու պատուաւորն այն է որ գիտէ մէկ յիշոցի դէմ երկու յիշոց արտասանել և աշխատել որ վերջի հայհոյողն ինքն լինի։ Այս թրքական ճարտասանութեան ձևին մէջ ամեն ոք չէ կարող փայլիլ։ Կը մնայ ուրեմն տեղւոյն դատարաններուն դիմել։

Զարաշար կը սխալիք, եթէ կը կարծէք որ դիւրագոյն միջոցն է այս թիւրքիոյ մէջ պատուով վիրաւորեալ մի անձի բաւարարութիւն ստանալու համար։ Նիւթական վնասներու, վաճառականական շահերու, ոճիրներու համար անգամ դատարաններն չտապ չունին բնաւ այս տեղ, մանաւանդ երբ գանգատողն չ օ շ ա փ ե լ ի փ ա ս տ ե ր չունի իւր ձեռաց մէջ։ Կրնաք ուրեմն երեւակայել թէ, երբ դատին առարկան լոկ վերացական մի բան է, ինչպէս պատիւն, որքան ատեններ դատն կարող է երկարել, և գուցէ ի վերջէ բանականութեան թելադրած վճռոյն հակառակն ստանալ։ Եւ դարձեալ ինչ վստահութեամբ դիմէ մի ոք այնպիսի մի կառավարութեան և անտի իւր պատուոյն պահպանութիւնն պահանջէ, երբ սա շարունակ կապացուցանէ իւր ներքին և արտաքին գործոց մէջ թէ պատիւն մի անտեղի բառ է, որ հնարեր են և միամիտներուն առջև միայն կարևորութիւն ունի։ Եւ մինչդեռ դատախազն ամիսներ և տարիներ, զրաղմունքներն ձգած, անհաւատարիմ վաստակաւորներու, կողմնակալ և զօշաքաղ դատաւորներու ձեռքն խաղալիք կը լինի, հասարակաց կարծիքն իւր առաջին տպաւորութեան մէջ հաստատ կը մնայ և անմեղութեան վճիռն չը արուած—եթէ երբէք արուի,—նա իրր ամբաստանեալ կը մնայ երկար ժամանակներ, և գուցէ անդարմանելի կերպով կը վնասի իւր ամեն նուիրական շահուց մէջ։ «Զրպարտէ, զրպարտէ, կասէ Ցօմ-Պաղիլ. միշտ զրպարտութենէ մի բան կը մնայ»։

Այս հանգամանաց մէջ իւր արժանապատուութիւնն ճանաչող մի անձ, որ անգիտանալով իւր անձին վերապահուածն, խմբագրութեան ասպարէզն կիջնէ, պարտաւորեալ է ինքն իւր ձեռամբ հատոյցն պահանջել, բռնադատելով հայհոյիչ և զրպարտիչ վատ սարուին յետս կոչել իւր ասածներն և ականջն ոլորելով ծռել նորա գլուխն դէպի վար որ լիզէ իւր փսխածն, որմէ հետէ միայն հասարակութիւնն լաւ կարող է տեղեկանալ թէ մինչև որ աստիճան վատութիւնն արմատ գտած է նորա հոգւոյն մէջ։

Այս վազեմի ասպետական վարմունքն, որ օրինաց հակառակ է ամեն երկրի մէջ, վասն զի, ինչպէս ի Ռուսիոյ, կառավարութիւնք գիտեն ապահովել և պաշտպանել ամեն քաղաքացոյ պատիւն, այստեղ առ այժմ մի անխուսափելի պէտք ձեռնարկն օր քան զօր զգալի կը լինի։ Այսպէսով գուցէ պատուակիր անձինք յաջողին սանձել այն լիրը և տմարդի մրոտողներուն գրիչն, ըմբերանել այն որիկայներն, որք անպատիժ մընալու ակնկալութեամբ, այլոց պատիւն խաղ են արել, հայհոյելով յաջ և հայեակ, սպառնալով չորս կողմ և գայթակղութիւնն իւրեանց կենսատու տարրն ընտրելով։

Կ. Պոլսոյ հայ լրագրաց սմանց անպատկառ յարձակմանց դէմ բաւարարութիւն ստանալու համար և նոցա հեղինակաց ճակտին վրա վաստութեան դրօշմն զետեղելու համար, տարաբաղդաբար այդ հարկադրական միջոցն կայ ուրեմն, սրան դիմել պարտաւորեալ են այսուհետև հրապարակախօս անձերն ամեն անգամ որ ընդդիմարանք ընդհանրական հարցերէն հեռանալով, անձնականութեանց վերայ կը կայանան և քարոզողն տապալելով նորա կարծիքներն ևս ջնջել կը նկրտին։ Սորա մի ապացոյց ոչ աւելի առաջ քան ութ օր տեղի ունեցաւ այստեղ, որ համառօտիւ յիշել հարկ է, զի այս եղելութիւնն բաւական խօսակցութեանց նիւթ լինելով, անտարակոյս նորա արձագանքն հասած է և ձեզ մօտ։

Մեր ազնուական և հմուտ ազգայիններէն մին, զոր կը ճանաչեն քաջ «Մշակի» ընթերցողք, պ. Գ. Նիկողոսեան, եկել է Կ. Պոլիս մի քանի ամիսներէ ի վեր ուսումնասիրելու ազգային կեանքն, ծանօթացնելու մեզ մեր ռուսիաբնակ եղբայրներուն հետ, և անապատի մէջ իւր ձայնն լսելի անելու համար,—քանզի չէ կարելի մեղմութեամբ խօսել մեր ազգին հետ,—լի եռանդեամբ, ազգու լեզուով և ճակատ առ ճակատ քննադատել ձեռնարկած է ամեն ազգային հասատատութիւններն, նոցա ուղղութիւն, առանց և մի վայրկեան չեղելու ընդհանուր տեսութիւններէ։ Մեր պատուարժան ազգայինն, մինչդեռ կենսական և այստեղի հասարակութեան համար բոլորովին նորալուր խնդիրներ կը յարուցանէր խիստ և անաչառ լեզուաւ, առանց որ և է ընդդիմախօսի հանդիպելու, ահա մի թիւրախօս լրագիր—որ մի անգամ գտնէ անունն տալու անպարկեշտութիւնն գործել ստիպուած եմ—թէրճիմանի էֆքեարն, նորա պատճառաբանութեանց դէմ իրր թէ խօսելու պատրուակաւ մի յօդուած հրատարակեց «Պօլսեցի» ստորագրութեամբ որ ծայրէ ի ծայր զրպարտութեանց, հեգնութեանց և հայհոյանաց հաւաքածոյ մի էր ընդդէմ մեր պատուական հայրենակցին, առանց որ և իցէ կերպով խնդրոյն հետ զբաղելու։ Եւ որ ամենէն աւելի հետաքրքրութեան արժանի է, յօդուածագիրն կը վերջացնէր իւր ազատութիւնն ինքզինքն պօլսեցոյ պատուոյն նախանձախնդիր և պաշտպան Հէրքիւլէսն անուանելով։

Մեր ռուսիաբնակ հայ հեղինակն մի վայրկեան անգամ չը վարանեցաւ պէտք եղած բնական միջոցն ձեռք առնելու իւր անձնական պատիւն պաշտպանելու համար և անմիջապէս իւր բարեկամներէն երկու անձ ուղարկեց յիշեալ խաչտառակ լրագրի վարձկալին, *) որք գնացին սարսափեցուցանելու զայն կամ յայտնելու «Պօլսեցի» ստորագրողն ով լինելն և կամ յետս կոչելու այդ յօդուածին պարունակութիւնն։ Խմբագիրն չուշեց առաջինն անել, և երկրորդ հրաւէրին ի պատասխան գաղտնապէս ոստիկաններ կանչել տուաւ և յանձնեց նոցա այս պարոններն, ասելով թէ սոքա եկել են զինքն մենամարտութեան հրաւիրելուն, զոր ինքն չէ կարող ընդունել, վասն զի երկրին օրինաց ամենաանհաղանդ մի հպատակ է, որ կարգելեն այսպիսի միջոցներու դիմելն զրական պայքարներ լուծելու համար։ Ցիշեալ պարոնները երաշխաւոր ցոյց տալով ազատեցան անմիջապէս և վարձակալն սոցա դէմ իւր դատէն ստիպուեցաւ եւ կենալ երկրորդ օրն, և այս ամենավատ երկչոտութեամբն հանդիսականապէս բաւարարութիւն տուած դատուեցաւ պ. Նիկողոսեանի։

Բնականապէս այս եղելութիւնն մեծ յուզմունք պատճառեց քաղաքիս մէջ, մանաւանդ որ հետևեալ օրն յիշեալ թիւրքա—պապական վատ վերադիրքով պատմելով գործն—ուր ազգն մատնելու ակնարկութիւններ անգամ կային,—ինքզինքն առաւել խայտառակեց։

Այն օրէն սկսեալ հայ, ֆրանսիացի, *) անգլիացի և թիւրք լրագիրներն խօսեցան այս եղելութեան վերայ, վատահամբաւելով նորա արարքն ինչպէս որ արժանի էր, և այն՝ որ նոյն օրինակ հատուածոց մի շարք խոստացած կեցած է մինչև այսօր և կրած ամօթն ու նախատինքն մարսելու զբաղած է։

Ահաւասիկ մի արկած որ առաջինն է իսկապէս թիւրքիոյ հայ լրագրութեան մէջ, և այն ջերմ համակրութիւնն որ գտաւ մեր ազգակիցն բոլոր մամուլի և բոլոր ուշիմ անձանց կողմանէ, որք եկան բազմութեամբ զայն շնորհաւորելու, մեծ երաշխաւորութիւն է որ սա յառաջիկային մի բարի օրինակ պիտի լինի։ Նա դրոշմելով մի լիրբ և ստահակ մարդու ճակտին վերայ նաև վատութեան կնիքն, կարծես մէկ անգամով լուծեց վրէժն այն ամեն պատուաւոր և ազնիւ անձանց, որք չը գիտէին կարծես մինչև ցայժմ ուրիշ կերպով իւրեանց պատիւն պաշտպանել, մի խումբ զարշելի և վատահամբաւ խմբագիրներու դէմ։

Եթէ այս կերպ մի գատավճիռ կարելի լինելուն երկիւղն տպաւորի ամեն հրատարակիչի սրտի մէջ, մէկ քիչ կը զսպուին անշուշտ այդ սանձարձակ թշնամանողներն և տեսնելով թէ իւրեանց ապականեալ ախորժակին յարմար չը կայ կերակուր, գուցէ կը քաշուին այդ ասպարէզէն, թողնելով որ առանց կրքի, լրջօրէն, վայելուչ և ընտրեալ ոճով, ազգային կարևոր խնդրոց վերայ խօսելու զբաղին։

Կ. Մ.

*) Ներփակեալ կը գտնէք Ֆար-Տիւ-Պօսֆոռ և Ստամպուլ լրագիրներուն այս մասին գրած հատուածներն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունիսի։ Պաշտօնապէս հաղորդում են. գեներալ Ֆելդցէխմէյստերի օգնական Բարանցով իր խնդիրքի համեմատ արձակված է ծառայութենից։ Կապացաւ Բարձրագոյն հրաման մահուան պատիժը կատարելու կարգի մասին։ Մահուան պատիժը կը կատարվի այսուհետև ոչ հրապարակապէս, այլ բանտի բակի մէջ։

Կ. ՊՕԼԻՍ, 16 յունիսի։ Սկսեցաւ սուլթան Աբդուլ-Ազիզի սպանման մասին դատաստանական գործը։ Մեղադրվածները 11 հոգի են, որոնց թուում են Միտհատ, Մահմուդ-Համադ, Նուրի-Համադ փաշաները և Ֆահրի-բէյ։ Երեք մարմնամարզներ խոստովանվեցան, որ նրանք սպանեցին սուլթանին Մահմուդի, Նուրիի և այլ փաշաների հրամանով։ Ֆահրի-բէյ նրանց օգնում էր։

ՓԱՐԻԶ, 16 յունիսի։ Դիւֆոր վախճանվեցաւ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունիսի։ Պաշտօնապէս հաղորդում են. Կովկասեան զինուորական շրջանի արտիլերիայի հրամանատար գեներալ-ադիւտանտ Սօֆիանօ նշանակված է գեներալ Ֆելդցէխմէյստերի օգնական։

ԼՕՆԴՕՆ, 17 յունիսի։ Քրէական դատարանը դատապարտեց խմբագիր Մօսթին 16 ամսով տաժանակիր աշխատանքի։

Կ. ՊՕԼԻՍ, 17 յունիսի։ Դատարանը վճռեց, Միտհատ, Մահմուդ, Մահմուդ-Համադ, Նուրի փաշաներին, Ալի-բէյ, Ֆահրի-բէյ, Հաջի Մեհմեդ և երկու այլ մեղադրվածներին որոնք Մուտաֆա անուն են կրում, մահուան պատժի ենթարկել։ Իզէդ և Սէյիդ մեղադրվածներին դատարանը վճռեց ենթարկել տաժանակիր աշխատանքների 10 տարի ժամանակով։

*) Այս լոկ վարձկալ է օրագրին, վասն զի ինքն մի տող կարող չէ գրել որ և է լեզուաւ և ատ ու անդ յօդուածներ գրել տալով կը լեցնէ իւր թերթն։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ